# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի << Մարմաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ գրադարանավարի, տեխնոլոգիայի (աղջիկներ ), երաժշտության , կերպարվեստի ուսուցիչների թափուր տեղերի համար:**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ՝ամեն օր ժամը $10^{00}$ – $15^{00}$, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթն անցկացվելու է Շիրակի մարզի << Մարմաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ում 2018 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը $13^{00}$-ին:

Հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Մարմաշեն:

Մրցույթում հաղթողի հետ կկնքվի հիմնական աշխատանքային պայմանագիր:

Տեղեկությունների համար զանգահարել 099 572056 հ/ հ-ով:

Տնօրեն՝ / Հ. Միխիթարյան /